

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
12 դեկտեմբերի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 նոյեմբերի 2006 թվականի N 1718-Ն

«ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ (CEN) ԳՈՐԾԸՆԿԵՐ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻ (PSB) ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Լիազորել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանն սկսելու Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (CEN) գործընկեր ստանդարտացման մարմնի (PSB) կարգավիճակ ձեռք բերելու գործընթացը:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին՝ Ստանդարտացման եվրոպական կոմիտեին (CEN) միացող ստանդարտացման մարմնի անդամակցության ամենամյա ֆինանսավորումն իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ «Միջազգային կազմակերպություններին անդամակցելու վճարների մասին» առանձին տողով:

(2-րդ կետը փոփ. 27.03.08 N 283-Ն)

3. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ ապահովել Ստանդարտացման եվրոպական կոմիտեին (CEN) միացող ստանդարտացման մարմնի նդամակցության անդամավճարների վճարումը:

(3-րդ կետը փոփ. 27.03.08 N 283-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. դեկտեմբերի 8
Երևան